«Իմ հայրենիքը»

«Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և հայրենիք»:

/Գարեգին Նժդեհ/

Հայրենիք, տարածք, որտեղ որևէ ժողովուրդ կամ էթնիկ խումբ ապրում է՝ կերտելով իր պատմությունը, կենցաղը, վարքն ու բարքը: Հայրենիքն ինձ համար սոսկ տարածք չէ, որտեղ մենք դարեր շարունակ ապրել ու արարել ենք՝ կերտելով մեր բազմադարյա պատմությունը, հայրենիքն այն երկիրն է, որտեղ մարդ ծնվել ու որի քաղաքացին է, հայրենիքը մեր նախահայր Հայկի բնօրրանն է, որից սնվում և դյուցազնական ուժ է ստանում յուրաքանչյուր հայի ոգի:

Ես հայ եմ և հպարտ եմ, որ ապրում և խոսում եմ հայերեն. լեզուներ շատ կան, սակայն աշխարհում ընդամենը վեց պետություն ունի այբուբեն, որից մեկը իմ հայ ազգինն է՝ աշխարհում առաջին քրիստոնյա երկրինը: Ես հայ եմ, ով այլոց նման լողացել է կյանքի փորձությունների հորձանուտում, ով «ճաշակել» է հայրենիքի կորստի ցավը: Ախր, ինչպես կարելի է մոռանալ լեռներով պարուրված իմ հայրենիքը. գարնանը՝ փթթող ու դայլայլող, ամռանը՝ լազուր ու խաղաղ երկնքի տակ փայլփլող, աշնանը՝ գունեղ տերևաթափով, բերք ու բարիքով, ձմռանը՝ փափուկ ու ճերմակ ձյան փաթիլներով պատված:

Աշխարհի որ մի հայը կարող է չհպարտանալ Հայաստանի տասներկու մայրաքաղաքներով, բիբլիական Արարատով, մայր Արաքսով, եղեռնից փրկված և Մատենադարանում տեղ գտած մեսրոպագիր մատյաններով, մեր վանքերով ու խաչքարերով, գերեվարված բերդաքաղաք Շուշիով...

Արարատին նայելիս՝ ուզում ես փարվել, սլանալ դեպի վեր, Սևանա լճին նայելիս՝ ուզում ես նստել ափին և անէացած ըմբոշխնել մայրամուտը, Բյուրականի աստղադիտարանին նայելիս՝ քեզ հպարտ հայ ես զգում, Մեծ Հայքի արևելյան աշխարհ Արցախին նայելիս՝ խենթացած կարոտագին գրկել ես ուզում:

Հայրենիքն իմ ավերված, բայց մաքառող ու ծաղկող երկիրն է՝ աշխարհին հայտնի իր արևահամ ծիրանով, քաղցրահամ խաղողով, հայի հավաքականության խորհրդանիշ նռով, լավաշ հացով, իշխան ձկով: Հայրենիքն իմ արևանիստ դաշտերն ու վսեմ լեռներն են, իմ լեզվի արևածոր հնչյուններն ու Սասնաբառ էպոսն է, մաշտոցյան Ամարասն է, Տաթևի շարական-օրհնանքն է, ազգային պարի որոտընդոստ զարկերն են, Կոմիտասի խազերն են, հայ մեծերի պանթեոնի մտքի գիտակ զավակներն են, Եռաբլուրում հանգչող և Արցախիս երկնքում թևածող քաջորդիներն են, Հայոց աշխարհը իրենց թևերի տակ առած հերոս արծիվներն են, մահագույժ ձեռքը ջարդող նահատակ Բեկորն ու Գևորգ Արշակյանն են, կենաց ծառն ամուր պահող հայ պապն է, թոռներին պահող՝ ծնկաչոք աղոթող հայ տատն է: Հայրենիքն իմ հավերժ կանգուն, հայի լինելիության խորհրդանիշ, «Մենք ենք, մեր սարերը» հուշակոթողն է:

Երևանի Գևորգ Արշակյանի անվան 22 հ/դ 5-րդ դասարանի աշակերտ՝
Արման Անատոլիի Թադևոսյան
Հեռախոսահամար՝ 099 23 80 83